ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻՆ

Փետրվարի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտաժողով նվիրված զորավար Անդրանիկ Օզանյանին:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ցադեյ Սարգսյանը: Նա նշեց անկյունաքարային այն դերն ու նշանակությունը, որ ունեցավ Անդրանիկը հայ ժողովրդի կյանքում: Անդրանիկ երևույթը նոր շերտերով հարստացրեց մեր ժողովրդի հոգեբանությունը, ամրացավ, կոփվեց նրա կամքը, բարձրացավ գիտակցականությունը, նորովի չափեց իր հնարավորությունների սահմանը, ասաց նա:

Ակադեմիկոս Հր. Սիմոնյանի զեկուցման վերնագիրն էր «Ժողովրդի հավերժական ուղեկիցը»: Զեկուցման մեջ նա փորձեց ամբողջացնել Անդրանիկի կերպարը որպես մարդ, ռազմական գործիչ, ինչպես նաև անդրադարձավ հերոսի քաղաքական հայացքներին, որոնք այսօր պետք է պատգամի ուժ ունենան յուրաքանչյուր հայի համար: Թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի երկարատև ու ծանր պայքարը հրապարակ իջեցրեց անվեհեր մարտիկների, նվիրյալ գործիչների փայլուն համաստեղություն, ասաց նա: Սակայն փառապանծ անունների շարքում բացառիկ տեղը պատկանում է Անդրանիկ Օզանյանին: Նա մղել է բազմաթիվ կռիվներ, տվել 30-ից ավելի ճակատամարտ և միշտ փայլել ռազմագիտական անթերի արվեստով: Նրա բնածին ռազմագիտական տաղանդի մասին հիացական կարծիքներ են հայտնել բազմաթիվ անվանի զորավարներ: Այդ տաղանդը բարձր են գնահատել նաև դաշնակից երկրների կառավարությունները: Հերոսն արժանացել է ռուսական, բուլղարական, հունական, ֆրանսիական շքանշանների, կրել ռուսական բանակի դեներալ-մայորի ուսադիրներ: Ակադեմիկոսն այն կարծիքը հայտնեց, որ մեր օրերում պետք է ուսումնասիրվեն Անդրանիկի մղած ճակատամարտերն ու կռիվները: Բանախոսը խոսեց մեր ժողովրդի հոգեբանության վրա Անդրանիկի կերպարի թողած մեծ ազդեցության մասին, անդրադարձավ նրա մարդկային կերպարին, բնավորության գծերին, անհատական առանձնահատկություններին: Վերջում Հր. Սիմոնյանը նշեց, որ հայ ժողովրդի ազգային հերոսը ոչ միայն զենքի մարդ էր, այլև իմաստուն քաղաքական գործիչ: Նա թողել է մնայուն ավանդներ, որոնց հավատարիմ պիտի մնան հայոց ներկա և գալիք սերունդները:

«Զորավար Անդրանիկի դասերը» վերնագրով զեկուցում կարդաց ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, դեներալ-մայոր Ա. Պետրոսյանը:

«Անդրանիկը Սասունի 1904 թ. գոյամարտերում» թեմայով զեկուցում կարդաց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ա. Համբարյանը: Սուլթանական կառավարությունը, գիտենալով, որ Սասունը արևմտահայ ազատագրական շարժման գլխավոր օջախներից մեկն է, որոշեց XX դ. սկզբին գլխովին բնաջնջել նրա բնակիչներին և Սասունում բնակեցնել քրդերին, ասաց նա: Հայդուկները Անդրանիկի գլխավորությամբ որոշեցին դիմադրավել թշնամուն: Կողմերի ուժերը խիստ անհավասար էին: Աբդուլ Համիդ II-ը դուրս էր բերել սասունցիների դեմ 20000-30000 զինվոր, իսկ սասունցիներն ունեին 100-200 հայդուկ և մինչև 1000 կռվող գյուղացիներ, որոնցից շատերը զինված էին երկաթներով, փայտերով ու

---

* *Տե՛ս սույն համարում տպագրվող «Զորավար Անդրանիկ» հոդվածը (էջ 44-50):*

քարերով: Անդրանիկը նախապես մշակեց ինքնապաշտպանության պլանը. ընդհանուր ղեկավարությունը վերցնելով իր ձեռքը, նա Սեմալը ու Ալխանքենը տվեց Հրայրին, Իշխանձորը՝ Գևորգ Զավուշին, իսկ Գելիեգուզանը՝ Վահանին: Անդրանիկը հայդուկների մի մասին ուղարկեց Մշո դաշտ, որ այնտեղից Սասուն բերեն սննդամթերք ու ռազմամթերք:

Պատերազմը կողմերի միջև, այնուհետև ասաց ղեկուցողը, սկսվեց 1904 թ. ապրիլի սկզբներին: Հայերը մի քանի անգամ ետ մղեցին կառավարական ու քրդական ուժերին, ահեղ մարտերը տևեցին ավելի քան մի ամիս. ի վերջո, թշնամին իր դերազանց ուժերով հաղթեց հայերին՝ կոտորելով շուրջ 7 հազար մարդ: Նա քանդեց սասունցիների գյուղերը, տները, հափշտակեց ունեցվածքը և սովի մատնեց նրանց: Սասունի ինքնապաշտպանության պարտությունը պայմանավորված էր ամենից առաջ ուժերի խիստ անհավասարությամբ, ապա մեծ տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի ու Ռուսաստանի թուրքամետ և հայավնաս քաղաքականությամբ: Ղեկավարվելով իրենց հաշիվներով, այդ տերությունները չէին ցանկանում օսմանյան կառավարության դիրքերի խաթարումը և, հետևաբար, նրա տիրապետության տակ ընկած ժողովուրդների ազատագրումը:

Աբդուլ Համիդը կարողացավ կոտրել սասունցիների ինքնապաշտպանությունը, բայց ոչ նրանց ազատասիրական ոգին, վերջում ասաց ղեկուցողը: Լեռնականների ինքնապաշտպանությունը մի անգամ ևս ցույց տվեց հայ ժողովրդի ազատատենչ ձգտումները, հարստացրեց թուրքական բռնապետության դեմ նրա վարած աննկուն պայքարի պատմությունը նոր էջերով: Անդրանիկը և նրա հայդուկները, գիտակցելով, որ իրենց առկայությունը կարող են առիթ տալ արևմտահայերի նոր կոտորածների, 1904 թ. աշնանը դուրս եկան Թուրքիայից և անցան Անդրկովկաս:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Կարապետյանը զեկուցում կարդաց «Ազգային հավերժություն ներշնչող որդին» թեմայով: Անդրանիկի կյանքի նպատակը օտարի լծից իր ժողովրդի ազատումն էր, որպեսզի Հայաստանը լիներ ամբողջական ու ինքնուրույն, ասաց նա: Անդրանիկը հայրենիքի այն զավակն էր, որին ռազմի ու քաղաքականության ասպարեզ հանեց իր ժողովրդի ապրելու և հանուն ազատության մարտնչելու կամքը: Հայ մարդը Անդրանիկի կյանքի օրոք նրա իրական հերոսականը պատմել է որպես հեքիաթային, շարունակեց Հ. Կարապետյանը: Զուր չի հայ ժողովուրդը նրան առասպելական Սասունցի Դավթի զարմից համարել և, ինչպես ասվել է, «նրա հնչուն ու խորհրդանիշ անունը դարձրել ժողովրդական հերոսապատումի ավետարան» (Ավ. Ահարոնյան):

Անդրանիկի պաշտելի դաղափարը, որի մեջ նա տեսնում էր հայոց համախմբման ու հարատևման երաշխիքը, ազգի բոլոր ուժերի ներդաշնակ միաձուլումն էր, այնուհետև ասաց զեկուցողը: Երբ թշնամին խնդիր ունի բնաջնջել ժողովրդի մինչև վերջին ծիլը, այլևս ի՜նչ դասակարգեր, ի՜նչ քաղաքական իրարամերժ ուժեր, ինչ բազմերանգ կուսակցություններ, ահա այսպես էր մտածում մեծ զորավարը: Նրա պատգամն էր «Մտածենք միայն փրկելու վերապրողները, որպեսզի վաղը, մյուս օր նույն հայրենիքին մեջ կարենանք վերակազմել հայ իրականությունը իր պատմական միսիոնով և ձգտումներով...

Իսկ կուսակցություններն ալ թող չունենան ավերակ հայրենիքի մեջ ժամանակ տեսական վարդապետություններ քարոզելու, բացի կոտորված ժողովրդի, վերապրողներու ֆիզիկական գոյության ապահովման գործը...»: Անդրանիկը, վերջում ասաց զեկուցողը, և մեր ժամանակակիցն է և մեր մշտնջենական ուղեկիցն ու ալակիցը:

«Լեգենդար զորավարը և Հայրենիքում հայապահպանության ջատագովը (1917-1918 թթ.)» թեմայով զեկուցում կարդաց ՀՀ ԳԱԱ ակադե-

միկոս Հ. Ավետիսյանը: Անդրանիկը ոչ միայն զորավար է, լեգենդ, հաղթանակի խորհրդանիշ, այլև ժողովրդական դիվանագետ, քաղաքագետ, ասաց նա: Նրա այդ հատկանիշները առանձնակի դրսևորվեցին Փետրվարյան հեղափոխությամբ Արևմտյան Հայաստանին նոր կարգավիճակ ընձեռնելու շնորհիվ: Անդրանիկը հանդես եկավ որպես հայոց բեկորները հավաքելու, Արևմտյան Հայաստանի վերաշինության, պետականության վերականգման հարցերի ջատագով: Նա դա արտահայտեց իր ստեղծած «Հայաստան» թերթի էջերում, ժողովրդի հետ ունեցած հանդիպումներում, հրապարակախոսական ելույթներում: Ազգային հերոսը հանդիսացավ արևմտահայության առաջին համագումարի կազմակերպիչներից և ղեկավարներից մեկը, ընտրվեց արևմտահայ ազգային խորհրդի անդամ և երկրապահ գիվիդիայի հրամանատար, ստացավ ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում: Նա չէր պատկերացնում Հայրենիքն առանց իսկական տիրոջ՝ հայի: Անդրանիկը, վերջում ասաց Հ. Ավետիսյանը, պայքարում էր Հայաստանի հայաթափման դեմ, ջատագովն էր սեփական հողում տունբուն դնելու, Հայրենիքը շենացնելու գաղափարին:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ